

# «Ազնավոր» հիմնադրամը մանրամասներ է ներկայացրել Ֆրանսիայից Հայաստան ուղարկված հումանիտար օգնության վերաբերյալ



15:49, 30 Դեկտեմբեր, 2020

ԵՐԵՎԱՆ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ճգնաժամային և աջակցության տրամադրման կենտրոնի կողմից վարձակալված 4 մարդասիրական ինքնաթիռով արդեն Հայաստան է բերվել ավելի քան 60 տոննա մարդասիրական օգնություն, որից 40 տոննա հավաքագրվել է «Ազնավոր» հիմնադրամի կողմից՝ 50 կազմակերպությունների և հարյուրավոր կամավորների միասնության, համերաշխության և քրտնաջան աշխատանքի շնորհիվ: «Արձնապրես»-ի փոխնախագահը՝ այս մասին հաղորդագրություն է տարածել Ազնավոր» հիմնադրամը:

«Ֆրանսիայում և Շվեյցարիայում տեղակայված 20 հավաքագրման կետերի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բաշխման 11 ցանցերի շնորհիվ 12000 փախստական ապահովվել է առաջին անհրաժեշտության պարագաներով: Նոյեմբերի 12-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Ելիսեյան պալատում ընդունեց հայ համայնքի և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ վերահաստատելու Ֆրանսիայի աջակցությունը Հայաստանին և Արցախին: Հանրապետության նախագահության հրավերով հանդիպմանը մասնակցեցին հետևյալ բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Ֆրանսիայի հայկական հիմնադրամը (ի դեմս հիմնադրամի նախագահ Բեդրոս Թերզյանի), «Ազնավոր» հիմնադրամը (ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Քրիստինա Ազնավորի) և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ֆրանսիայի ներկայացուցիչները (ի դեմս միության նախագահ Նադյա Գործունյանի): Հանդիպմանը ներկա էին նաև Յուրի Ջորկայեֆը, Նիկոլա Ազնավորը, Անդրե Մանուկյանը, Ստեֆան Հասթայանը և Անուշ Ջազդյանը: Էմանուել Մակրոնը հանդիպման առիթով վերահաստատեց Ֆրանսիայի և Հայաստանի «պատմական բարեկամությունը»:

«Այս ղեկավար պահին Ֆրանսիան կանգնած է Հայաստանի կողքին», - ասաց նա: Դեպի Հայաստան բժշկական առաքելություն ուղարկելուց բացի, հանրապետության նախագահը նաև հայտարարեց բռնատար ինքնաթիռներով Հայաստանին հումանիտար օգնություն ուղարկելու և առողջապահության ոլորտում ֆրանս-հայկական համագործակցությունը շարունակական դարձնելու մասին: Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարության վարձակալված առաջին բռնատար ինքնաթիռը երեւան ժամանեց նոյեմբերի 22-ին: Այն տեղափոխում էր Ֆրանսիայի իշխանությունների կողմից նվիրաբերված իրեր՝ առաջին բուժօգնության պարագաներ, բժշկական սարքավորումներ, շարժական բժշկական կայան, որը հնարավորություն է տալիս սպասարկել 500 հոգու, ինչպես նաև ծածկոցներ, իրականացնող պարագաներ՝ պատերազմից տուժած բնակչությանը բաժանելու համար: Նոյեմբերի 27-ին Երևանում վայրէջք կատարեց հումանիտար օգնությամբ բեռնված երկրորդ ինքնաթիռը՝ Ֆրանսիայի պետքարտուղար Ժան-Բատիստ Լըմուանի գլխավորած պատվիրակության հետ միասին, որի կազմում էին նաև «Ճգնաժամային իրավիճակներում աջակցության տրամադրման կենտրոնի» տնօրեն Էրիկ Շեվալիեն, «Ազնավոր» հիմնադրամի գործադիր տնօրեն Քրիստինա Ազնավորը, Յուրի և Դեմի Ջորկայեֆները, Ստեֆան Հասթայանը, «Electriciens sans frontières» կազմակերպության թիմը, ֆրանսիացի լրագրողներ և այլ պատվիրակներ:

## Հատուկ նախագծեր

10:06, 25.12.2020  
«Երևանյան քեթսերներ».  
«Ով է ապրում տնակում»-ն ամենապահանջվածն է. մանկական. նոյեմբեր, 2020

10:03, 18.12.2020  
«Երևանյան քեթսերներ».  
Նարինե Աբգարյանի նոր գիրքն առաջատարն է. թարգմանական. նոյեմբեր, 2020

Բաժնի բոլոր նյութերը

Подпишитесь на наш канал  
Яндекс Дзен

YouTube  
Subscribe

## Լրահոս

12:58 Թրամփի մեքենան հանել են աճուրդի

12:48 ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է ԱԸ ԱԺ նախագահի և ԱԳ նորանշանակ նախարարի հետ

12:24 Մատաղիսում հայտնաբերվել է 4 զինձառայրոյի մարմին. ԱՊՊԵ-ն Հաղորդում կինտրի հնարավոր ողջ մնացածներին

12:09 Քրիստոսի հրաշալիա Ենունդը հույսի աղբյուր է սրտաբեկ ժողովրդի համար. Գարեգին Բ Կաթողիկոսի պատգամը

11:59 Մեկ օրում Արցախ է վերադարձել 178 արցախցի

11:48 Վարչապետ Փաշինյանը համաճարակային իրավիճակով պայմանավորված ինքնամեկուսացված է. Սանտ Գևորգյան

11:34 Ռուս խաղաղապահները Լեռնային Ղարաբաղում ականագերծել են շուրջ 427 հա տարածք

11:29 Վրաստանի Դեմոսի քաղաքի մոտ տեղի ունեցած երկրաշարժը զգացվել է նաև Լոռու մարզում

11:09 Հաստատվել է կորոնավիրուսի 309 նոր դեպք, առողջացել է 817 քաղաքացի

11:00 Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Հիսուս Քրիստոսի Աստվածահայտնության և Սուրբ ծննդյան տոնը

Բոլոր նորությունները

Վաղը

Օդանավը Հայաստան էր բերել «Ազնավուր» հիմնադրամի կողմից հավաքագրված օգնությունը, ինչպես նաև այլ բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների տրամադրած մարդասիրական բեռը: Դեկտեմբերի 11-ին երրորդ ինքնաթիռը վայրէջք կատարեց Հայաստանում՝ տեղափոխելով մարդասիրական օգնության պարագաներ (անվասայլակներ, պատգարակներ, քայլակներ, բժշկական սարքավորումներ, դիմակներ, դեղեր, խնամքի պարագաներ, հագուստ), որոնք հավաքվել էին «Ազնավուր» հիմնադրամի կողմից Ֆրանսիայում և Շվեյցարիայում, ինչպես նաև Վեոլիա հիմնադրամի կողմից Ազնավուր հիմնադրամին տրամադրված հիգիենայի պարագաներ և ծածկոցներ: Դեկտեմբերի 18-ին մարդասիրական օգնության 4-րդ չվերթը վայրէջք կատարեց Երևանում՝ բերելով «Ազնավուր» հիմնադրամի և այլ կազմակերպությունների կողմից ձեռք բերված իրեր (անվասայլակներ, ծննդային հագուստ, դեղորայք): Դեպի Հայաստան հաջորդ մարդասիրական չվերթը ծրագրված է 2021 թվականի հունվարի 5-ին, որով ՀՀ կտեղափոխվի քաղաքացիական պաշտպանության հագուստ, մանկական հագուստ և բժշկական պարագաներ:

Ինքնաթիռներով ուղարկված մարդասիրական օգնությունից զատ՝ «Ազնավուր» հիմնադրամը հավաքել է ևս 60 տոննա բեռ, որը Հայաստան կտեղափոխվի ծովային և ցամաքային ճանապարհով 2021 թվականի սկզբին: Այս հսկայածավալ գործունեության արդյունքում «Ազնավուր» հիմնադրամը և վերջինիս գործընկերները ընդհանուր առմամբ հավաքելու և բաշխելու են 100 տոննա մարդասիրական օգնություն: Եվս մեկ անգամ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ներգրավված բոլոր կողմերին՝ Ֆրանսիայի նախագահին, «Ճգնաժամային իրավիճակներում աջակցության տրամադրման կենտրոնին», Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը, բոլոր կազմակերպություններին և անհատներին, ովքեր մասնակցել են անհրաժեշտ օգնության հավաքագրման և տեղափոխման գործընթացին: Հուսով ենք, որ այս միասնականությունը կօգնի մեզ հաղթահարել առկա բոլոր մարտահրավերները:

Այս ամենը հնարավոր դարձավ հետևյալ կազմակերպությունների և անհատների շնորհիվ՝ «Վեոլիա» հիմնադրամ, «Electriciens sans frontières», Յունիսեֆ, Ֆրանսահայ «Կապույտ խաչ», ASPA, ACABA, AGENK, AGUMP, UA CE, Ժնևի հայկական կենտրոն, Լիոնի ֆրանսահայ բժշկների միություն (UMAF Lyon), Տիչինոյի հայ համայնք, SAHB Hilfsmittelberatung, REHA Rheinfelden, «Կամավորները՝ հանուն մարդկության», Գրենոբլի հայկական մշակույթի տուն, «Միասնություն» ասոցիացիա, «Սասուն» ասոցիացիա, «Հայաստանի երեխաներ» ասոցիացիա, Կլամարի քաղաքապետարան, Մարսելի քաղաքապետարան, Պլեսի-Ռոբենտոն քաղաք, «Ani démenagement» բեռնափոխադրող կազմակերպություն, Ալֆորվիլի հայկական մշակույթի տուն, «Elise Care», Մարսելի հիվանդանոցների միություն, Փարիզի հիվանդանոցների միություն, Meditraining, LHD Groupe France, Aide Actions Internationales Pompiers, Résidence Sainte Bernadette, Tempolog, Levis, Sud Express, Անուվիլի քաղաքապետարան, Նոր Ալպիտանիայի ֆրանս-հայկական միություն, l'Association Chiloe, Բիարիցի «AgurArménie» միություն, «Dons solidaires» կազմակերպություն, Անտոնիի ֆրանս-հայկական ակումբ, Անուվիլի, Ալֆորվիլի և Իսսի-Լե-Մուլիտյի հավաքագրման կենտրոններ, «DiaspoHay» ասոցիացիա, Բեդոյան ընտանիք, Ստեֆան Հասթանյան, Յուրի և Դենիձորկայեֆներ, Ժոզեֆ Առաքել, Էլիզ Բողոսյան, Անուշ Կիրմիզյան, Դավիթ Պերյե, Արաքս Տեր-Գևորգյան, Հասմիկ Փոլադյան, Ժյուլիետ Հովհաննիսյան, Ժան-Լյուկ Մեսսաժե, Սիլվի Մորետի, Հայկ Առաքելյան, Բենժամեն Մուրե-Ֆինդիկյան, Հրաչ և Հակոբ Կիրմիզյան, Արթուր Կարապետյան և այլք»,- ասված է հաղորդագրության մեջ:

🗨 Տպել | En Français | AMP Տարբերակ

### Կարծիքներ

- 16:36, 11.12.2020  
Միևսկի խմբի ձևաչափում պետք է առաջ տանել արցախցիների ինքնորոշման իրավունքի ճանաչման հարցը թուրքագետ
- 10:52, 28.11.2020  
Տնտեսական խաղաղ խաչակրաց արշավանքն առաջնահերթություն է

Բաժնի բոլոր նյութերը

100

արմենի  
AR

🇫🇷 J'aime cette Page
🇬🇧 Nous

---

<< ԿԲ
30/12/2020

Դոլար	522.59	▲	+0.29
Եվրո	641.11	▲	+1.29
Ռուբլի	7.02	▼	-0.08
Ֆունտ	709.47	▲	+5.41
Ոսկի	31491.35	▲	+5.73
Արծաթ	439.36	▲	+6.45
Պլատին	17456.92	▲	+513.46

---

#### Շարաթվա ամենաընթացվածը

10:54, 30.12.2020  
Դիտվել է 3515 անգամ  
Սյունիքում ստեղծված իրավիճակի կապակցությամբ ԼՀԿ անդամները կհանդիպեն քաղաքացիների հետ

13:38, 30.12.2020  
Դիտվել է 3138 անգամ  
Մալիում ռազմական գործողության ընթացքում ֆրանսիական զինուժի հայ զինծառայող է զոհվել

12:06, 30.12.2020  
Դիտվել է 3097 անգամ  
Լավրովը հաջորդ տարում նախկին ԽՍՀՄ տարածքում ընդհանուր առմամբ կայուն իրավիճակ է ակնկալում

15:34, 05.01.2021  
Դիտվել է 3047 անգամ  
ՀՀ նախագահը վարակվել է կորոնավիրուսով

09:15, 30.12.2020  
Դիտվել է 2914 անգամ  
Հանձնարարականներ Սյունիքում  
այլընտրանքային ճանապարհների հետ կապված. Պապիկյանն ամփոփում է տարին